ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ

ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«11» հունվարի 2019 թվականի № 12-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 21-ին թիվ 153-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությունը չի կատարել աշխատանքային նախագծով սահմանված պահանջները և օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-366 պայմանագրի 3.4 կետի 3.4.4 ենթակետով սահմանված պարտավորությունները:

Ընկերությունն 2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով՝ 976.8 հազար (ինր հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, մշտադիտարկումների մասով՝ 287.5 հազար (երկու հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, իսկ ընդերքօգտագործման Պ-366 պայմանագրին կից 3-րդ հավելվածով սահմանված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների մասով՝ 4 000.0 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-366 պայմանագրի 3.4 կետի 3.4.4 ենթակետով սահմանված պարտավորությունները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

2018 թվականի հուլիսի 25-ի թիվ 01ԱԳ/29.4/4095-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018 թ. նոյեմբերի 21-ի թիվ 153-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, սույն

վարչական վարույթն երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Հանձնաժողովը, փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկելով՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները գտավ, որ սույն վարչական վարույթն ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից վերացվել է վարչական վարույթի հարուցման հիմք հանդիսացած ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված խախտումները: Ընկերությունը կատարել է մշտադիտարկումների և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի մասով համապատասխան վճարումները: Ընկերության կողմից կատարվել է նաև ընդերքօգտագործման թիվ Պ-366 պայմանագրին կից 3-րդ հավելվածով սահմանված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորություններից վճարում՝ 660,0 հազար (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով, իսկ պարտավորությունների մնացորդի վերաբերյալ ներկայացվել է Քարաբերդի համայնքի ղեկավարի հետ կնքված համաձայնագիր, համաձայն որի Ընկերությունը պարտավորվում է գումարի մնացորդ մարել մինչև սույն թվականի փետրվարի 20-ը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 21-ին թիվ 153-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ երկօրյա ժամկետում ծանուցել Ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

1/11/2019

X

VERIFIED OCSP 1/11/2019 20:32:39 GMT+4

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

/ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ